

րից արժանաւորագոյնի ձեռքը յանձնէ ժողովուրդը իր ամենից նուիրական հաստատութիւնը:

* *

Պակաս անմխիթար չէ և մեր տաճկահայ և պարսկահայ եղբայրների վիճակը: Երկու սահմանադրական երկրներում էլ հայերի հրճուածքին սահման չկար. սակայն երկու տեղ էլ հայերի վիճակն աւելի վատթարացաւ, քան առաջ էր: Տաճկաստանում հայերի դէմ հալածանքը, կեանքի և գոյքի անապահովութիւնը, կանանց և աղջկանց անպաշտպան վիճակը բարբարոսների վայրենի կրքերի դէմ, կրօնական անհամբերողութիւնը, հոգեւորաների սանձարձակութիւնը, պաշտօնեաների թշնամական վերաբերմունքը դէպի դարաւոր տանջուած հայ ժողովուրդը, սխտեմատիք կոտորածները և ընդհանուր կոտորածի երկիւղը երկու ծայրայեղ միջոցների են ստիպել դիմել հայ ժողովրդին—անիծեալ և կորստաբեր գաղթին և ոչ պակաս կորստաբեր հայ ժողովրդի ճամար՝ կրօնափոխութեան: Կ. Պօլսի հայ թերթերը վերջերս գլոխեցին, որ Չարսանճագի, մի ամբողջ թեմի հայ ժողովուրդ դիմել են ոռոսաց հիւպատոսին և խնդրել, որ իրանց ընդունեն յոյն եկեղեցու գիրկը, որպէսզի վախճան զրուի իրանց անտանելի կացութեան, ընտրել են չարիքի փոքրագոյնը, որ մարմինը փրկելու համար միայն հողին կորցնեն, փոխանակ այժմեան նման հողին և մարմինը միանգամայն կորցնելու Չարսանճագի առաջնորդը հեռագիրներով զեկուցել է այս ծանր դիպուածի մասին Կ. Պօլսի պատրիարքարանին. չգիտենք սակայն ժամանակ և սիրտ ունի՞ այդ ժողովը մի ամբողջ ժողովրդի կորչելու մասին մտածելու...

* *

Իսկ Պարսկահայերի վիճակը մաղիցն է կախուած. Պարսից կառավարութեան դիմումը Թաւրիզի հայոց առաջնորդին, որպէսզի Պարսկաստանի Հայերը չեզոք պահեն իրանց և չխառնուեն քաղաքական հարցերին, մի վտանգաւոր սպառնալիք է նրանց. պարսկահայերի կոտորածը անխուսափելի կլինի, եթէ նրանք չզսպեն իրանց եռանդը և խոհեմութեան շաւղի մէջ չպահեն իրանց:

* *

Ժողովրդական այս աղէտալի շրջանի մէջ եթէ մի փայլուն կէտ կայ՝ այդ զրականութիւնն է. չի կարելի ասել, թէ Կովկասում կամ Տաճկաստանում հրատարակուող գրքերի մէջ երևան են գալիս գլուխ գործոցներ և տաղանդներ է որ ասպարէզ են գալիս ամեն կողմից. բայց մի բան գոնէ մխիթարական է, այդ այն է, որ հայերէն լեզուով հրատարակութիւնների թիւը բազմապատ-

կուել է և հետևաբար ընթերցողների թիւը աւելացել. մեր աշխատակիցներէց մէկը անցեալները գրում էր մեզ, թէ հայութեան այս անկման ժամանակ, երբ նրա գոյութեան սպառնում են բազմաթիւ աննպաստ պայմաններ, առայժմ անհրաժեշտը նա չէ, որ լաւ գրքեր տանք կարդալու, այլ որ հայ տառով գրքերի քանակը բազմանայ, հայ լեզուով կարդացողների թիւը շատանայ, ամեն մէկը գիտենայ կարդալ և կարդայ ինչ էլ պատահի, միայն թէ կարդայ հայերէն լեզուով, իսկ երբ ամենքը կարդալ գիտենան, ապա լաւ գրքերը ինքնին հանդէս կգան, այնուհետև կորչելու վնասանքը անցած կարելի է համարել:

Այժմ պէտք է ուրախ լինել, որ շատ գիրք է տպւում, շատ գիրք տարածւում, թէպէտ և այդ հրատարակութիւնների մեծ մասը զուրկ գրական արժանաւորութիւններից: Յամենայն դէպս գրականութիւնն է որ իշխում է հայկական կեանքում:

* *

Մայիսի 25-ին տօնուեց մի սիրելի տօն. դա հայ գրականութեան տօնն էր յանձին մեր վիպագիր Շիրվանզադէի:

Շիրվանզադէի մանրամասն կենսագրութիւնը մենք տուինք թերթիս անցեալ տարուայ համարներից մէկում և ցոյց տուինք նրա մատուցած ծառայութիւնը հայ նորագոյն գրականութեան, ուստի և աւելորդ ենք համարում կրկնել այստեղ: Աւելորդ էլ ենք համարում դրուատել Շիրվանզադէի տաղանդի արժանիքները, որովհետև նորա բազմաթիւ վիպական գրուածքները հրապարակի վրայ են և հասարակութեան սեպհականութիւն:

Ասենք միայն, որ հայ ժողովուրդը և հայ մամուլը գիտեցան արժանապէս գնահատել տաղանդաւոր գրագէտին և տալ նրան յօբէլեանի առթիւ իր լիուլի յարգանքները բազմաթիւ շնորհաւորական ցոյցերով, հեռագիրներով ու պատգամաւորութիւններով, հրատարակելով նրա երկերից մի քանիսը, քննադատական գործեր հրատարակելով նրա գրուածների մասին, դանազան ներկայացումներ և բանկէտներ կազմակերպելով նրա օգտին և ի վերջոյ տալով նրան փոքր ինչ և նիւթական ապահովութիւն:

Խմբագրութիւնս խորապէս գնահատելով իւր բազմամեայ աշխատակցի տաղանդը, իւր խնդակցութիւնը յայտնեց պ. Շիրվանզադէին պատգամաւոր ուղարկելով յօբէլեանի հանդիսին իւր աշխատակիցներից՝ պ. Վարդգէս Աղանեանցին, որ թերթիս կողմից շնորհաւորեց նրան: